

ՄՓՅՈՒՌԱՆՆԵՐ ԿՅԱՆԵՐ ՋԻՅՆԻ ՅԱՐԱԲԵՋՈՒՄԻՆ ԱՐՄԻԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄՓՅՈՒՌԱՆԵՐԻՄ

(1969 թ. հուլիս-դեկտեմբեր)

ԲՈՒՂԱՐԻԱ

Սոֆիայի Կլիմենտ Օխրիտսկու անվան համալսարանի արևելագիտական բաժնին առընթեր բացվել է հայոց լեզվի ամբիոն, որի վարիչն է Երևանի պետական համալսարանի նախկին սան, բանասիրական գիտությունների թեկնածու էդուարդ Սելյանը:

«Պայքար», 1 հոկտեմբերի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստի համաշխարհային գրականության հրատարակչությունը լույս է ընծայել Մարիետա Շահինյանի մեկհատորյակը ռումիներեն, «Նոր օր», 18 հուլիսի

ՍԻՐԻԱ

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը մեծ շուքով է տոնել հալեպահայ գաղութը: Հալեպի բնում ներկայացվել է «Անուշ» օպերան: Հորեկյանական հանձնախմբի նախաձեռնությամբ Թումանյանի գործերից «Անուշը», «Մի կաթիլ մեղրը», «Գիքորը» և «Սասունցի Դավիթը» նիդար հալիլին թարգմանել է արարբերեն:

«Արարատ», 6 դեկտեմբերի

* * *

Դամասկոսի Հ. Բ. Ը. միության տիկնանց օժանդակ մարմնի նախաձեռնությամբ հոկտեմբերի 25-ին մեծ շուքով տոնվեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը:

«Զարթոնք», 4 դեկտեմբերի

* * *

Հալեպում, հայ Ազգային մշակութային միության ակումբում սեպտեմբերի 21-ին տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին: Կոմիտասի մասին հանգամանալից խոսել է Անդրանիկ Կիրակոսյանը, այնուհետև տրվել է գեղարվեստական ճոխ համերգ:

«Յառաջ», 5 հոկտեմբերի

* * *

«Արարատ» օրաթերթում տպագրված մի նամակում, գրված Տեր Զորից, կարդում ենք. «1915... Տեր Զոր, մեկ ու կես միլիոն նահատակներ: 1969, իր իսկ մոխիրներեն ծնած փյունիկ թռչունը, թևերը առած թռիլ կուզե դեպի իր հայության ծոցը, դեպի իր սիրելի հայրենիքը:

Այժմ, մոտավորապես քսան տուն է բաղկացած փոքրիկ գաղութ մը գոյություն ունի այն քաղաքին մեջ, որ անցյալին ականատեսը եղավ մեր ազգին դաժան օրերուն, և մենք, Տեր Զորահայերս, պահապան ենք այն սրբազան ոսկորներուն, որոնք կհանգչին մեր եկեղեցվոր փոքրիկ հիշատակարանին մեջ և կամ ճեղքի ճեղքի անապատները:

Մենք, հաջորդ սերունդս, կուզենք ապրիլ հայությանը և երգել ու կարդալ հայերենով, միայն թե մեզի կպակսին գիրքեր՝ տրվելու համար մեր զավակներուն, որոնց հանդեպ պարտականություն մը ունինք: Մեր բոլոր ճիգերը պիտի թափենք զիրենք հայ պահելու և հայ մեծցնելու մեր ազգին ու մեր պանծալի հայրենիքին համար:

Մեր միակ ապավենն ու ազատարար լաստը մեր մայրենի լեզուն է. այնքան ատեն, որ կխոսինք և կկարդանք հայերենով, պիտի ապրինք, հոգ չէ թե Տեր Զորի մեջ:

Կիսնդրենք որ մեզի ուղարկվին փոքրիկներու և պատանիներու հարմար դիրքեր, որպեսզի անոնք կարենան միշտ հաղորդվել մեր Մեսրոպյան մեծասքանչ տառերով:

Խորին շնորհակալություն բոլոր անոնց, որ կհետաքրքրվին Տեր-Զորով:

Նամակը ստորագրել է Տեր-Զորի Տիկնանց հանձնախմբի Հ. Բ. Ը. միության ատենապետուհի Արշալույս Քյոշկերյանը, որի հասցեն է. Արթին Սաաթի, Շարի էլ-Սամ, Տեր-Զոր, Սիրիա:

«Արարատ», 30 սեպտեմբերի

ԵԳԻՊՏՈՍ

Հելիոպոլիսի Կոկանյան սրահում տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ նվիրված Ծովանդ

Օտյանի ծննդյան 100-ամյակին՝ Երվանդ Օտյանի կյանքի և գործունեության մասին մանրամասնորեն պատմել է երգիծական կարիչ Ալ. Սարուխանը: Վահե Պոյաճյանը կարդացել է «Հնկեր Փանջունիից» հատվածներ: Այնուհետև հայ գեղարվեստասիրաց միության թատերախումբը Գրիգոր Փարթամյանի բեմադրությամբ ներկայացրել է «Զարշըլը Արթին աղայի» առաջին արարը:

«Նոր օր», 11 հուլիսի

Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Նոյեմբերի 25-ին Բեյրութի հայ Ազգային երաժշտանոցի սրահում բացվել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդես:

«Արարատ», 1 դեկտեմբերի

* * *

Բեյրութում ՅՈՒՆԵՍԿՈ-յի սրահում նոյեմբերի 30-ին Թեքեյան մշակութային միությունը կազմակերպել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո, որը անցել է մեծ հաջողությամբ:

«Զարթոնք», 2 դեկտեմբերի

Ի Ր Ա Ն

«Սասնա ծռեր» դյուցազնավեպը թարգմանվել է պարսկերեն: Թարգմանիչներ Գեորգիս Աղասին և դոկտոր Ալեքսանդր Պատմազյանը «Սասնա ծռերը» թարգմանելիս ձեռքի տակ ունեցել են Գարեգին Սրվանձտյանցի, Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Լևոն Սյուրմելյանի աշխատությունները, պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդիի ֆրանսերեն թարգմանությունը, ինչպես նաև վիպերգի առանձին պատումները՝ հրատարակված Հայաստանում:

Գիրքը լույս է ընծայել Թեհրանի «Փեյք» հրատարակչությունը, այն ունի անձնանունների բառարան և պատկերազարդված է Հակոբ Կոչոյանի նկարներով:

«Լրաբեր», 22 նոյեմբերի

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ստամբուլում բացվել է Կարապետ Ղազարյանի նկարների ցուցահանդեսը: Ղազարյանի այստեղ ներկայացված նկարները ժամանակին մեծ զնահատականի են արժանացել Ժնևում և Երևանում կազմակերպված նրա ցուցահանդեսների ժամանակ:

Ցուցահանդեսում ներկայացված են թվով 30 բանակարներ և նատյուրմորտներ:

Հայ, թուրք և օտար մամուլը մեծ զովեստով է արտահայտվել Կ. Ղազարյանի նկարների մասին:

«Ջահակիր», 17 հուլիսի

Ֆ Ր Ա Ն Ս Ի Ա

Հունիսի 17-ից սկսած Փարիզում տեղի է ունեցել Հայաստանի կինոնկարների փառատոն, որտեղ ներկայացվել են «Պր. Ժակը և ուրիշները», «Շարլ Ազնավուրը Հայաստանում», «Տասնօրյակ», «Երգը թևերի վրա», և «Էրբերունի—Երևան» շարժանկարները:

«Պայքար», 26 հունիսի

* * *

Ֆրանսիայի հեռուստատեսության ծրագրով տեղի են ունեցել մի շարք հաղորդումներ հայկական թեմաներով: Այսպես, հուլիսի 27-ին ցուցադրվել է «Էջմիածին, Երուսաղեմ և Վենետիկ» հաղորդումը, որը պատրաստել են գեր. Կ. Ամատունին և Գի Գուրթո դը Սեսվալը: Օգոստոսի 15-ին ելույթ են ունեցել գեր. Կ. Ամատունին, պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը և հայր Տարտեն: Սեպտեմբերի 19-ին հաղորդվել է «Գաղուն և Հայաստանը», իսկ հոկտեմբերի 5-ին՝ «Վանականությունը և հայկական ավանդությունը» նյութերը:

«Ջահակիր», 4 սեպտեմբերի, 30 հոկտեմբերի

* * *

Մարսելում կազմվել է «Հայ գեղարվեստասիրաց հանձնախումբ», որը որոշել է 1970 թ. մայիսի ընթացքում ներկայացնել «Անուշ» օպերան հայ և օտար լավագույն արվեստագետների մասնակցությամբ:

Բացի դրանից ձեռնարկված է կազմելու երգչախումբ անվանի երաժշտագետ Ժորժ Գոմպի ղեկավարությամբ:

«Ջահակիր», 4 սեպտեմբերի

* * *

Լիոնի «Փրոգրես» օրաթերթը հուլիսի 13-ի համարում հոդված է նվիրել հայ մանրանկարչությանը:

«Նոր օր», 23 սեպտեմբերի

* * *

Նոյեմբերի 1-ից սկսած Փարիզի մայր եկեղեցու մատենադարանում ցուցադրվել են արվեստագետ Արսեն Զաքրյանի կողմից պատրաստված և իրայտի վրա փորագրված VII—XVI դդ. հայկական մանրանկարչությունից ընդօրինակություններ:

«Ջահակիր», 6 նոյեմբերի

Ա Ն Գ Ի Ի Ա

Այս տարվա փետրվարից Լոնդոնում սկսել է գործել Սահակ-Մեսրոպ միօրյա վարժարանը,

որը ունի հինգ դասարան և 70 աշակերտ: Վարժարանը կազմակերպել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Լոնդոնի մասնաճյուղի նախաձեռնությամբ: Դպրոցի տնօրեն Կարապետ Եսայանը հայագիտական ուսման հատուկ ծրագիր է մշակել աշակերտների համար:

Սահակ-Մեսրոպ վարժարանում դասավանդվում են հայոց լեզու, հայ գրականություն և հայ ժողովրդի պատմություն:

«Արև», 4 հունիսի

* * *

Անգլիայի հայ գաղութը զարգացել է մասնավորապես վերջին տարիներին: Անգլիայում այսօր ապրում են մոտ 6000 հայեր:

Գաղութը ունի Հայ տուն, որտեղ գործում են Լոնդոնի Հայ երիտասարդաց միությունը, Հայ տան վարչությունը, Մշակութային հանձնախումբը, Տիկնանց հանձնախումբը: Հայ տունը կազմակերպում է դասախոսություններ, ցուցադրում է ֆիլմեր, ունի գրադարան:

Լոնդոնի անգլիական պետական գրադարանում կա նաև հայ գրականության բաժին: Բրիտանական գրադարանը նույնպես ունի հայագիտական բաժին:

Համալսարանի հայագիտական բաժնում դասավանդում են պրոֆ. Դ. Լանգը և պրոֆ. Չ. Դաուսթը, որը պրոֆ. Ֆեյդիի աշակերտն է եղել:

«Արարատ», 23 սեպտեմբերի

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայացիգի հրատարակչությունը լույս է ընծայել գերմանացի երաժշտագետ Ֆրիդրիխ Շթրեյբերի հեղինակությամբ Արամ խաչատրյանի կենսագրությունը գերմաներեն: Հատորը պարունակում է Ա. խաչատրյանի ստեղծագործությունների ամբողջական ցանկը և բազմաթիվ լուսանկարներ:

«Ջարթոնք», 24 օգոստոսի

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵՌԼԻՆ

Արևմտյան Բեռլինի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են 75 սփյուռքահայ երիտասարդներ, որոնք ունեն իրենց ուսանողական միությունը, կազմակերպել են Հայ տուն, որը մեծ ջանքեր է թափում տեղի հայ համայնքի մշակութային ձեռնարկումների ծավալման համար:

«Ջահակիր», 13 նոյեմբերի

Ի Տ Ա Լ Ի Ա

Ֆրանսահայ անվանի թատերագիր Արթուր Ադամովի «Սահմանից անդին» պիեսը բեմադրվե-

վել է Միլանի «Փիքոլո» թատրոնում: Պիեսը պատկերում է հալածանքի ենթարկված մի մտավորականի ողբերգությունը:

«Նոր օր», 18 հուլիսի

* * *

Հոռմի համալսարանի Արվեստի պատմության բաժինը հրատարակում է Թուրքիայում գտնվող հայկական հուշարձանների ցանկը: 1969-ին այդ հուշարձանները այցելել են «ուսումնասիրական առաքելության» մասնակիցները՝ Փաուլո Քունեն, Թոմազո Պրիչիա Ֆրաթատորին, էռեսենիո Մոնթին:

«Աշխարհ», 6 դեկտեմբերի

Ա Վ Ս Տ Ր Ի Ա

Հունիսին Վիեննայի Արվեստագետների տան ֆրանսիական դահլիճում տեղի է ունեցել հայ միջնադարյան ճարտարապետության չորրորդ ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսը ունեցել է մեծ հաջողություն և արժանացել է տեղի գիտական շրջանների և մամուլի բարձր գնահատականներին: Այն կազմակերպվել էր Վիեննայի իտալական մշակույթի տան, Վիեննայի և Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտների, տեղի հայ համայնքի և իտալահայ մշակույթի միության կողմից:

«Գրական թերթ», 29 օգոստոսի

* * *

Վիեննայի հայ համայնքը վերջերս կազմակերպել է դրական-երաժշտական երեկո՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին: Երեկոն բացել է դոկտ. Վահե Պալեհյանը: «Կոմիտասը հայ գրականության մեջ» թեմայով զեկուցել է չեխ անվանի հայագետ Լյուդմիլա Մոտալովան: «Կոմիտաս վարդապետի նշանակությունը» թեմայով զեկուցել է դոկտ. Մեսրոպ Դրիգորյանը: Կոմիտասի երգերի կատարմամբ հանդես են եկել Անժելա Կարապետյանը և չեխուհի Յարմիլա Կարենսկան:

«Գրական թերթ», 29 օգոստոսի

Ա Մ Ն

Հարվարդի համալսարանի հայագիտական ուսմանց ամբիոնի ղեկավարությունը հինգ տարի առաջ ստանձնել է պրոֆ. Ռոբերտ Վ. Թոմսոնը, որտեղ այժմ հայ լեզուն են ուսումնասիրում բազմաթիվ օտար և հայ ուսանողներ: Պրոֆեսորի դոկտորական դիսերտացիայի թեման է եղել «Սուրբ Աթանասի հայերեն և ասորերեն թարգմանությունները»: Ռոբերտ Թոմսոնի բազմաթիվ հոգվածները, որոնք վերաբերում են մեր դասական մատենագիտությանը, լույս են

տեսել Բելգիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Բյուզանդագետների XIII համագումարի նյութերում տպագրված է նրա «Հայերը Փոքր Ասիոյ մեջ ժԱ գարուն» երկասիրությունը: Հարվարդի համալսարանի Հարվերտ Արմինիերն Սիրիզ շարքում շուտով լույս կընծայվի Թոմսոնի մի երկը՝ նվիրված Ագաթանգեղոսին և Գրիգոր Լուսավորչին: Բացի այս բոլորից, պրոֆ. Թոմսոնը շնորհակալ աշխատանք է կատարում՝ ի մի հավաքելով բոլոր օտար գիտական և գեղարվեստական հանդեսներում 1966 թ. ի վեր լույս տեսած հոդվածները, որոնք կապ ունեն հայ ժողովրդի պատմության, մշակույթի և ճարտարապետության հետ:

Թոմսոնի ուսանողներից Մայկլ Սթոնը առաջին անգամ Երուսաղեմի համալսարանում հիմնադրել է հայ լեզվի ուսումնասիրության բաժին:

«Նոր օր», 23 օգոստոսի

* * *

Հոլիվուդի «Միշուալ» կինոստուդիան ավարտել է Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգության նկարահանումը: Ֆիլմում նկարահանվել են բեյրութահայ դերասան Ռադմիկ Լիպարիտյանը և ամերիկյան «Բեաթր օֆ Արց» թատրոնի դերասանուհի Սոնա Տյուկարյանը: Պրոդյուսերի վկայությամբ կինոնկարը բավական հաջող և ծիծաղաշարժ է:

«Գրական թերթ», 29 օգոստոսի

* * *

Նյու-Յորքում լույս է տեսել «Հովհաննես Թումանյան» վերնագրով գրքույկը՝ նվիրված մեծ բանաստեղծի 100-ամյակին: Գրքույկում գետնի վրա են «Հայոց լեռներում», «Հին օրհնություն», «Տերն ու ծառան» և «Կիկոսի մահը» գործերի թարգմանությունները:

Հրատարակությունը իրականացրել են Հակոբ Բանդյանը և Հարություն Թաթոսյանը իրենց ջանքերով և միջոցներով:

«Ջահակիր», 2 հոկտեմբերի

* * *

Կալիֆորնիայի համալսարանի Լոս-Անջելոսի ֆիլիալում մայիսին բացվել է հայագիտական ամբիոն: Ամբիոնի վարիչ և հայագիտու-

Պրոֆ. Թոմսոնի այդ աշխատանքների ամփոփումները տպագրված են «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1969 թ. № 2-ում և 1970 թ. № 1-ում:—Ման. խմբ.:

թյան դասավանդման ծրագրի տնօրեն է նշանակվել դոկտ. Ավետիս Սանջյանը:

Համալսարանի հայագիտական ամբիոնի պաշտոնական հաստատման մասին Լոս-Անջելոսի Կալիֆորնիայի համալսարանի փոխ-նախագահ Պոլ Փրեռլի հայտարարությունից տեղեկանում ենք, որ պրոֆ. Սանջյանից բացի հայագիտական բաժնում դասախոսում են դոկտ. Ռիչլըդ Հովհաննիսյանը, դոկտ. Ջորջ Իկլընը և ուրիշներ:

Համալսարանի նախագահ Չարլզ Յանգի պաշտոնական հայտարարության համաձայն 1969 թ. սկսած համալսարանի ամբիոնը թևակոխելու է նոր շրջան: Համալսարանում սովորողները հնարավորություն ունեն ձեռք բերելու լեզվաբանական, գրական, բանասիրական և պատմաբանական մասնագիտություններ: Դասընթացների հետ մեկտեղ տարվում են նաև գիտահետազոտական աշխատանքներ: Հանգանակության միջոցով գոյացած գումարները պետք է օգտագործվեն՝ 1. թոշակներ տալու համար այն ուսանողներին, որոնք ձգտում են մասնագիտություն ձեռք բերել հայագիտության բնագավառում, 2. պաշտոններ տրամադրելու նրանց, ովքեր պետք է զբաղվեն հայ մշակույթի և գրականության հետ առնչություն ունեցող մենագրություններ պատրաստելու գործով, 3. հին և միջնադարյան հայկական սկզբնաղբյուրների, ինչպես նաև հայերեն հրատարակված արժեքավոր մենագրությունների անգլերեն թարգմանությունները պատրաստելու և վերջապես՝ 4. հնարավորություն ստեղծելու, որ համալսարան ժամանեն հեղինակավոր գիտնականներ և դասախոսներ:

Համալսարանի հայագիտական գրադարանային ֆոնդը հարստացնելու նպատակով զանազան միջոցառումներ են մշակված, գնվել են մասնավոր գրադարաններ, ինչպես նաև պրոֆ. Սանջյանը այս նպատակով այցելել է Հայաստան և դրադարանի համար ապահովել է գիտությունների ակադեմիայի, Հայաստանի համալսարանի և այլ հրատարակչությունների գրքեր:

«Ջարթոնք», 17 հոկտեմբերի

* * *

Նոյեմբերի 23-ին Չիկագոյի հայ գաղութը խորին երախտիքով և սիրով նշել է հայ ժողովրդի երկու անմահների՝ Կոմիտասի և Թումանյանի ծննդյան 100-ամյակները: Հորելյանը կալմակերպվել էր ս. Գրիգոր Լուսավորչի ծխական խորհրդի և հատկապես տ. Սարգիս Գաշիքյանի կողմից:

«Հրաբեր», 16 դեկտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Օդոստոսի 5-ին և 6-ին արգենտինյան բեմի վրա ներկայացվել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը: Թատերգությունը իսպաներեն են թարգմանել Ա. Ահարոնյանը և Ս. Զորյանը: Բեմադրողն է Մելիք Քոչարյանը: Ներկայացումը անցել է մեծ հաջողությամբ:

«Պայքար», 11 հոկտեմբերի

* * *

Արգենտինահայ համալսարանականների միությունը ընթերցասեր հասարակայնությանն է ներկայացրել Րաֆֆու «Խենթի» իսպաներեն թարգմանությունը: Վեպը թարգմանել է Հովսեփ Մուսայանը, «Երկու խոսքը» գրել է անվանի բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը, որը մասնակցել է նաև թարգմանությանը:

«Զահակիր», 13 նոյեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ